



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-16030**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2016 թվականի մարտի 03-ի թիվ 44-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/38-Ա**  
**ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ**  
**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
*(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)*

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Սարգսյանի, Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Լուսինե Սահակյանի, Մարտուն Փանոսյանի

քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,  
քննության առնելով փաստաբան Կարինե Դանիելյանին (արտոնագիր թիվ 721) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 01.02.2016թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Կարինե Դանիելյանն ունի 54.500 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսների համար:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

01.02.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 44-Ա/ԿԳ-16030 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Կարինե Դանիելյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

05.02.2016թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի մարտի 03-ին, ժամը՝ 19:15-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

*Պատասխանողի կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել:*

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Վարույթին կցված են ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ. և 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքներն, առ այն, որ փաստաբան Կարինե Դանիելյանն ունեցել է 54.500 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հունվարից մինչև դեկտեմբեր ամիսների համար, որն ամբողջությամբ վճարել է:

### **5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

*Պատասխանողի նկատմամբ նույնանման խախտում կատարելու փաստով նախկինում հարուցվել են 3 կարգապահական վարույթներ, որոնք կարճվել են՝ արտոնություն կիրառվելու հիմքով (վերջինը՝ 27.09.2011թ.):*

### **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

*Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.*

Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, , «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 17-րդ կետի պահանջներով խորհուրդը՝

## **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 01.02.2016**

**թվականի 44-Ա/ԿԳ-16030 որոշմամբ փաստաբան Կարինե Դանիելյանի (արտոնագիր թիվ 721) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի հիմքով:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Կարինե Դանիելյանին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Երվանդ Վարոսյան